ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հոկտեմբերի 19-24-ը

քաղաք Ստոկհոլմում (Շվեդիայի Թագավորություն) կայացած ճանաչողական այցի արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Վրեժ Մխիթարյան - ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ,

Համլետ Սահակյան - ՊԵԿ նախագահի տեղակալ,

Արսեն Սառիկյան - ՊԵԿ զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ,

Արսեն Արզումանյան - ՊԵԿ հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության պետի տեղակալ,

Աննա Պողոսյան - «Ջի Սոլյուշնս» ՊՈԱԿ-ի ծրագրերի իրականացման դեպարտամենտի ղեկավար,

Լիա Ղուկասյան - ՊԵԿ միջազգային հարկման վարչության ֆինանսական հաշիվների փոխանակման և համապատասխանության բաժնի ավագ հարկային տեսուչ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Շվեդիայի Թագավորություն, քաղաք Ստոկհոլմ, 2025 թվականի հոկտեմբերի 19-24-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Ճանաչողական այցը կազմակերպվել էր Շվեդիայի հարկային մարմնի կողմից, որին մասնակցում էին ՊԵԿ ներկայացուցիչները և Շվեդիայի հարկային մարմնի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Նախատեսվող ճանաչողական այցը հանդիսանում է Հայաստանի և Շվեդիայի հարկային մարմինների միջև ձևավորվող համագործակցության բաղկացուցիչ մասը: Համագործակցության նպատակն է իրականացնել հարկային մարմինների

կարողությունների գնահատում, բացահայտել համագործակցության ուղղությունները և աջակցել նշված ուղղությունների բարեփոխման աշխատանքներում:

Մասնավորապես՝ ս.թ. սեպտեմբերի 8-ից 12-ն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել շվեդ ներկայացուցիչների փաստահավաք 1-ին այցը ՊԵԿ: Այցի շրջանակներում նախանշվել են շվեդական կողմից տրամադրվող աջակցության հնարավոր նախնական ուղղությունները, որին և հաջորդել է ՊԵԿ համապատասխան մասնակիցների այցը Շվեդիա՝ տեղում ծանոթանալու Շվեդիայի հարկային մարմնի կարողություններին, այնուհետև կկազմակերպվի շվեդական կողմի փաստահավաք 2-րդ այցը Հայաստան, որից հետո կհաստավեն աջակցության (համագործակցության) վերջնական ուղղությունները:

Գործընթացը ֆինանսավորվում է Շվեդիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության (SIDA - The Swedish International Development Cooperation Agency) կողմից:

5. Քննարկված թեմաները.

Այցի ընթացքում քննարկվել են առաջին փաստահավաք այցի շրջանակներում նախանշված համագործակցության 7 նախնական ուղղությունները.

1) հարկային կարգապահության ռիսկերի կառավարում և ընտրողականության ավտոմատ համակարգ,

2) ստուգման համակարգի բարելավում,

3) թվային հարկային ծառայությունների մատուցում և հաղորդակցություն,

4) մարդկային ռեսուրսների կառավարում, վերապատրաստումներ և կարողությունների զարգացում,

5) կանաչ տնտեսություն և բնապահպանական կայունություն,

6) միջազգային հարկում և համագործակցություն,

7) գործառնական ռիսկերի կառավարում:

ՊԵԿ ներկայացուցիչները տեղում ծանոթացել են վերը նշված ուղղություններով Շվեդիայի հարկային մարմնի կողմից իրականացվող գործընթացներին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել Շվեդիայի հարկային մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ովքեր իրականացնում են հնարավոր համագործակցության ուղղություններին առնչվող գործառույթներ: Մասնավորապես՝ ՊԵԿ ներկայացուցիչները տեղում ծանոթացել են Շվեդիայի հարկային մարմնի ռազմավարական, կարգապահական և գործառնական ռիսկերի, մարդկային ռեսուրսների, ներքին հաղորդակցման և հարկ վճարողներին մատուցվող թվային ծառայությունների, ստուգումների կառավարման, ինչպես նաև տրանսֆերային գնագոյացման և միասնական հաշվետվողական ստանդարտի ներդրման աշխատանքներին:

Հանդիպումների ընթացքում շվեդ համապատասխան մասնագետները նեկայացրել են շնորհանդեսներ, այնուհետև հարց և պատասխանի ձևաչափով քննարկվել են գործող ընթացակարգերը:

ՊԵԿ ներկայացուցիչները հանդիպում են ունեցել նաև Շվեդիայի հարկային մարմնի ղեկավարի հետ:

Այցի վերջում հայ և շվեդ մասնագետները նշված 7 ուղղություններից նախնական առանձնացրել են 4-ը, որոնց ուղղությամբ հնարավոր աջակցությունն առավել կարևորվել է՝ հաշվի առնելով գործող օրենսդրական կարգավորումները և հարկային մարմինների կարողությունները:

Նախատեսվում է այդ ուղղություններն ամբողջականացնել և դրանց վերաբերյալ վերջնական որոշումը կայացնել շվեդ մասնագետների հաջորդող այցի շրջանակներում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2026 թվականի հունվար ամսին կազմակերպել շվեդ ներկայացուցիչների 2-րդ փաստահավաք այցը Հայաստան՝ աջակցության վերջնական ուղղությունները որոշելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել նախքան 2-րդ փաստահավաք այցն առանձին հարցերի շուրջ կազմակերպել ընթացիկ հեռավար քննարկումներ և վերջնական ուղղությունները որոշել 2026 թվականի հունվարին նախատեսվող այցի արդյունքներով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Վրեժ Մխիթարյան

Համլետ Սահակյան

Արսեն Սառիկյան

Արսեն Արզումանյան

Աննա Պողոսյան

Լիա Ղուկասյան

28.10.2025թ.